Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 27th April 2025 Bulletin 19/2025

New Sunday

Ապրիլ 24

1915 - 2024

Յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակներուն

Commemoration of the Armenian Genocide's Sainted Victims

«Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններէն. կենդանութեան շունչ պիտի տամ, իմ հոգիս պիտի տամ ձեզի, եւ ձեզի ձեր երկիրը պիտի վերադարձնեմ»:

Եզեկիէլ 37.14

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

ՅԱԿՈԲՈՍ 3:1-12

Եղբայրնե՛րս, ձեր մէջ շատ վարդապետներ թող չըլլան, գիտնալով թէ աւելի խստութեամբ պիտի դատուինք՝: Որովհետեւ բոլորս ալ կը սայթաքինք շատ բաներու մէջ. եթէ մէկը չի սայթաքիր խօսքով՝ կատարեալ մարդ է, կարող՝ սանձելու նաեւ ամբողջ մարմինը: Ահա՛ ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի հնազանդին մեզի, եւ կը կառավարենք անոնց ամբողջ մարմինը: Ահա՛ նաւերն ալ, որ ա՛յդչափ մեծ են ու կը քշուին սաստիկ հովերէն, կը կառավարուին ամենափոքր ղեկով մը՝ ի՛նչպէս նաւուղիղը փափաքի: Այդպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց կը պարծենայ մեծ բաներով: Ահա՛ ո՛րչափ նիւթ կը վառուի քիչ մը կրակով: Լեզո՛ւն ալ կրակ մըն է, անիրաւութեան աշխարհ մը: Լեզուն ա՛յնպէս դրուած է մեր անդամներուն մէջ, որ կ՚ապականէ ամբողջ մարմինը ու կը բռնկեցնէ բնութեան շրջանը, իսկ ինք կը բռնկի գեհենէն: Գազաններու, թռչուններու, սողուններու եւ ծովային արարածներու ամէն բնութիւն՝ կը նուաճուի ու նուաճուած է մարդկային բնութենէն: Բայց ո՛չ մէկը կրնայ նուաճել լեզուն. ան անզուսպ չար է, լի մահաբեր թոյնով: Անո՛վ կ՚օրհնաբանենք Աստուած ու Հայրը, եւ անո՛վ կ՚անիծենք մարդիկ՝ որ ստեղծուած են Աստուծոյ նմանութեամբ: Միեւնոյն բերանէն կ՚ելլեն օրհնաբանութիւն եւ անէծք: Եղբայրնե՛րս, պէտք չէ որ այս ա՛յսպէս ըլլայ: Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն կը բխեցնէ՞ անոյշ ու դառն ջուր: Եղբայրնե՛րս, թզենին կրնա՞յ ձիթապտուղ տալ, կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս՝ ո՛չ մէկ աղբիւր կրնայ տալ թէ՛ աղի, թէ՛ անոյշ ջուր:

James 3:1-12

Taming the Tongue

Not many of you should become teachers, my fellow believers, because you know that we who teach will be judged more strictly. We all stumble in many ways. Anyone who is never at fault in what they say is perfect, able to keep their whole body in check.

When we put bits into the mouths of horses to make them obey us, we can turn the whole animal. Or take ships as an example. Although they are so large and are driven by strong winds, they are steered by a very small rudder wherever the pilot wants to go. Likewise, the tongue is a small part of the body, but it makes great boasts. Consider what a great forest is set on fire by a small spark. The tongue also is a fire, a world of evil among the parts of the body. It corrupts the whole body, sets the whole course of one's life on fire, and is itself set on fire by hell.

All kinds of animals, birds, reptiles and sea creatures are being tamed and have been tamed by mankind, but no human being can tame the tongue. It is a restless evil, full of deadly poison.

With the tongue we praise our Lord and Father, and with it we curse human beings, who have been made in God's likeness. Out of the same mouth come praise and cursing. My brothers and sisters, this should not be. Can both fresh water and saltwater flow from the same spring? My brothers and sisters, can a fig tree bear olive, or a grapevine bear fig? Neither can a salt spring produce fresh water.

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

28 April	1) Luke 4:31-41; 2) Acts 6:8-7:29; James 3:13-4:6; John 1:18-28; 3) Matthew 4:12-25; 4) Mark 1:14-20
29 April	1) Luke 4:42-5:11; 2) Acts 7:30-8:2; James 4:7-17; John 1:29-34; 3) Matthew 5:1-16; 4) Mark 1:21-34
30 April	1) Luke 5:12-16; 2) Acts 8:3-13; James 5:1-11; John 1:35-42; 3) Matthew 5:17-48 4) Mark 1:35-45
1 May	1) Luke 5:17-26; 2) Acts 8:14-25; James 5:12-20; John 1:43-51; 3) Matthew 6:1-21; 4) Mark 2:1-12
2 May	1) Luke 5:27-39; 2) Acts 8:26-40; 1 Peter 1:1-12; John 2:1-11; 3) Matthew 6:22-34; 4) Mark 2:13-22
3 May	1) Luke 6:1-11; 2) Acts 9:1-22; 1 Peter 1:13-25; John 2:12-22; 3) Matthew 7:1-8:17; 4) Mark 2:23-3:5

St. Yeghiche Armenian Church Parish Council,

Would like to extend their thanks and gratitude to our Ladies Guild for organizing last Sunday's painted Easter Eggs which were blessed by HG Bishop Hovakim Manukyan and distributed to the faithful. ***Thank You.***

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1:1-17

Christ the Light and Life of Men

Սկիզբէն էր Խօսքը, ու Խօսքը Աստուծոյ քով էր, եւ Խօսքը Աստուած էր. ան սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն ինչ եղաւ անո՛վ. եղածներէն ո՛չ մէկը եղաւ առանց անոր: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր. լոյսը կը փայլէր խաւարի մէջ, բայց խաւարը չճանչցաւ զայն:

Աստուծմէ ղրկուած մարդ մը կար՝ որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա եկաւ վկայութեան համար՝ որ վկայէ Լոյսին մասին, որպէսզի բոլորը հաւատան անոր միջոցով: Ինք չէր այդ Լոյսը, հապա եկաւ՝ որպէսզի վկայէ Լոյսին մասին:

Ճշմարիտ Լոյսը ա՛ն էր՝ որ կը լուսաւորէ աշխարհ եկող՝ ամէն մարդ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհը եղաւ իրմով, բայց աշխարհը չճանչցաւ զինք: Իրեններուն եկաւ, սակայն իրենները չընդունեցին զինք: Բայց անոնց՝ որ ընդունեցին զինք - անոնց՝ որ կը հաւատան իր անունին - իրաւասութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու: Անոնք ո՛չ արիւնէն եւ ո՛չ մարմինի կամքէն ծնան, ո՛չ ալ մարդու կամքէն, հապա՝ Աստուծմէ:

Եւ Խօսքը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ դիտեցինք անոր փառքը՝ Հօրը միածինի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութեամբ լեցուն: Յովհաննէս վկայեց անոր մասին, եւ աղաղակեց. «Ասիկա՛ է ան՝ որուն մասին կ'ըսէի. "Ան որ իմ ետեւէս կու գայ՝ իմ առջեւս եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր": Եւ անոր լիութենէն մենք բոլորս ստացանք շնորհք շնորհքի վրայ: Որովհետեւ Օրէնքը տրուեցաւ Մովսէսի միջոցով, բայց շնորհքն ու ճշմարտութիւնը եղան Յիսուս Քրիստոսի միջոցով:

The Holy Gospel of Jesus Christ according to John 1:1-17

The Word Became Flesh

In the beginning was the Word, and the Word was with God, and the Word was God. He was with God in the beginning. Through him all things were made; without him nothing was made that has been made. In him was life, and that life was the light of all mankind. The light shines in the darkness, and the darkness has not overcome [a] it.

There was a man sent from God whose name was John. He came as a witness to testify concerning that light, so that through him all might believe. He himself was not the light; he came only as a witness to the light.

The true light that gives light to everyone was coming into the world. He was in the world, and though the world was made through him, the world did not recognize him. He came to that which was his own, but his own did not receive him. Yet to all who did receive him, to those who believed in his name, he gave the right to become children of God— children born not of natural descent, nor of human decision or a husband's will, but born of God.

The Word became flesh and made his dwelling among us. We have seen his glory, the glory of the one and only Son, who came from the Father, full of grace and truth.

(John testified concerning him. He cried out, saying, "This is the one I spoke about when I said, 'He who comes after me has surpassed me because he was before me.' ") Out of his fullness we have all received grace in place of grace already given. For the law was given through Moses; grace and truth came through Jesus Christ.

AKHTAMAR TOUR
PILGRIMAGE TO AKHTAMAR AND TO THE LAND OF ANCESTORS:
ISTANBUL, VAN, KARS, ANI & ARARAT FROM 3RD TO 8TH SEPTEMBER 2025
See flyer for full details

Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր

Սբ. Հարության տոնի հաջորդ շաբաթ օրը Հայ Առաքելական Եկեղեցում Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օրն է: Հիսուս Քրիստոսին մկրտողի և Նրա գալուստն ավետողի՝ Հովհաննես Մկրտչի գլխատման պատմությունն առավել մանրամասն անդրադարձել են Մատթեոս և Մարկոս ավետարանիչները /Մատթ. 14:1-12, Մարկ. 6:14-29/: Ըստ ավետարանիչների՝ Հերովդես թագավորը ձերբակալում և բանտ է նետում Հովհաննես Մկրտչին, որովհետև նա մեղադրում էր թագավորին՝ եղբոր կնոջը՝ Հերովդիային, հափշտակելու և կնության առնելու համար: Հերովդեսը չի համարձակվում սպանել Հովհաննես Մկրտչին: Սակայն, իր ծննդյան օրը հրապուրվելով Հերովդիայի դստեր պարով, թագավորը երդվում է տալ նրան այն, ինչ կամենա: Ոխակալ Հերովդիայի ցուցումով աղջիկը ցանկանում է Հովհաննես Մկրտչի գլուխը: Սբ. Աստվածածնից հետո Սուրբ Հովհաննես Մկրտիչը Հայ Առաքելական Եկեղեցու մեծագույն սուրբն է: Սրբի անունը, իբրև բարեխոսի, ժամերգության ընթացքում ընթերցվող մաղթանքի մեջ հիշատակվում է երկրորդը՝ Սբ. Աստվածամոր անունից հետո: Ըստ ավանդության՝ Սբ.Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից իր հետ Հայաստան է բերում սրբի մասունքներից և ամփոփում Մուշ քաղաքին մոտ գտնվող վայրում, ուր և հետագայում կառուցվում է նշանավոր Սբ.Կարապետի վանքը:

Սուրբ Հովհաննես Մկրտիչը հավատացյալների բարեխոս սուրբն է և յուրաքանչյուր հավատացյալ, իր աղոթքներով դիմելով այս սրբին, նրա բարեխոսությամբ արժանանում է Տիրոջ ողորմությամբ:

Commemoration of Beheading of St. John the Baptist

The Saturday following the Holy Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ, the Armenian Church commemorates the beheading of St. John the Baptist (also known as The Forerunner).

The writers of the Gospels, St. Matthew and St. Mark, have explained the history of beheading of St. John the Baptist, who had baptized Christ, and gave the good news of His Coming (Mt 14:1-12; St. Mk 6:14-29).

According to the Evangelists, King Herod arrests and imprisons St. John the Baptist as a result of John's condemnation of the king's marriage to Herodias, the wife of his brother Philip. Herod wants to put John to death, but fears the Jews, because they considered John to be a prophet. On Herod's birthday, fascinated by the dancing of the daughter of Herodias, the king makes an oath to give her anything for which she asks. Following her unforgiving mother's instructions, she asks for the head of St. John the Baptist on a platter. The king, realizing he has been fooled, grants the request.

St. John the Baptist is one of the greatest saints in the Armenian Church. We entreat his name as an intercessor during the divine services, generally following the name of St. Mary.

According to tradition, St. Gregory the Illuminator, brings the relics of St. John to Armenia from Caesarea, and buries them near the town of Moush, after which the famous Monastery of St. John the Baptist is built. Tradition also tells us that the head of St. John the Baptist is buried underneath the Holy Altar of the Gandzasar Monastery in Artsakh (Nagorno-Karabagh).

St. John the Baptist remains as one of the most popular saints among the Armenian faithful.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Կրկնազատիկ (Նոր կիրակի)

Կրկնազատիկ է կոչվում երեք պատճառներով:

Զատիկ նշանակում է ազատություն և այդ օրը կրկնակի ազատության օր է: Աստված մեզ ազատել է մեղքերից, սակայն մենք գտնվում ենք կրքերի ազդեցության ներքո: Իսկ երբ Աստված ամեն ինչ նոր է անում և բոլոր կարիքներից մեզ ազատում, դա կոչվում է Կրկնազատիկ: Կրկնազատիկ է կոչվում մեր հարության պատճառով: Քրիստոս առաջին կիրրակի օրը մեզ հարություն տվեց Իր հոգով ու զորությամբ, իսկ երկրորդ կիրակի օրը մեզ հարություն է տալու ըստ մարմնի՝ և մեռելներից հարություն առնելով պիտի անմահանանք: Նոր կիրակի և Կրկնազատիկ է կոչվում, քանզի նորովի ենք տոնում մեր հոգու փրկության նավակատիքը՝ հոգևոր ուրախությամբ ու տոնախմբությամբ:

New Sunday



This Sunday is called New Sunday because of three reasons.

Firstly, Easter means freedom and the new Sunday is a day of double freedom. God has set us free from sins, and however we are under the influence of passions. And when God does everything in a new way order to set us free from needs, it is called New Sunday.

This Sunday is called New Sunday also because of our resurrection. On the first Sunday Christ raised us from the dead thanks to His Soul and Power, and on the second Sunday he will raise us from the dead bodily, so that raising from the dead we will become immortal.

And finally, this Sunday is called New Sunday because we celebrate the feast of our soul saving in spiritual joy and fete.

ԻԻՂԱԳԻՆ

Ազգային եւ հոգեւոր մեր կեանքին անբաժանելի մէկ մասնիկն է մեր հաւատոյ հօր, Սբ Գրիգոր Լուսաւորչի մշտավար կանթեղին արծարծ պահպանման աւանդն ու կտակը:

Հայաստանեայց Առաքելական Մայր եւ Սուրբ Եկեղեցին, մեր հոգիներուն ծննդավայրը, կ՛ապրի եւ կը գործէ որովհետեւ հայ ժողովուրդի հաւատաւոր զաւակները ունին պայծառ գիտակցութիւնը աջակից դառնալու անոր՝ իրենց նիւթաբարոյական զոհողութիւններով:

Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնին առիթով յիշեցէք Ձեր Եկեղեցին եւ սրտաբուխ նուերներով կանգուն պահեցէք հայոց հաւատքի աննկուն բերդը:

YOUGHAKIN DONATION—EASTER OFFERING

An inseparable part of our national and spiritual life is the legacy and testament of the eternal preservation of the light of our father of faith, St. Gregory the Illuminator.

The Armenian Apostolic Holy Church, the birthplace of our souls, lives and works because the believing children of the Armenian people have the bright consciousness to support it with their material and moral sacrifices.

On the occasion of the Feast of the Glorious Resurrection of Christ, remember St Yeghiche Armenian Church and keep the unshakable fortress of the Armenian faith standing with your heartfelt gifts.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ. ՁԵՁ ԵՒ ՄԵՁ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ

«Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք իր անուանը կը հաւատան: Նրանք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից եւ ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին»(Յովհ. 1:12-13):

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, Յարութեան հաւատքի վկաներ,

Սուրբ Յարութեան տօնից յետոյ առաջին կիրակին է, որ կոչուել է Նոր կիրակի կամ կրկնազատիկ: Քրիստոսի յարութեամբ սկսուած նոր արարչութեան կիրակին է, նորոգուած աշխարհի եւ նորոգուած մարդկութեան խորհրդանիշ: Յետաքրքիր զուգադիպութեամբ Հայոց Ցեղասպանութեան նահատակների ոգեկոչումի օրը գրեթէ միշտ այս շրջանին է համընկնում: Դրանով կարծես նահատակութեան ու վերապրումի խորհրդաւոր զուգահեռներներ են դառնում Հայոց համար կարեւոր այս երկու օրերը: Ինչպես որ մարդու համար իր հաւատքի ամենամեծ քննութիւնը մահն է, այսպէս էլ Հայոց համար Քրիստոսի հաւատքի եւ յարութեան խոստումին վստահելու մեծագոյն քննութիւնը Հայոց Ցեղասպանութիւնն է: Ցեղասպանութեան վերքը կրող որքա՜ն սրտով մարդիկ "ինչու" հարցումից սկսած մինչեւ անհաւատութիւն Աստծոյ հետ կռիւ ունեցան եւ կամ մերժում որոշեցին՝ Աստծու կողմից անարդարութիւն որակելով սա: Բայց սա, իսկապէս, մեր համազգային քննահարցն է՝ հաստատելու հաւատքի տեսիլքը Փրկչի ոտնահետքերով քայելելու, Գողգոթայի բարձունքում խաչուելու, գերեզմանուելու եւ յարութիւն առնելու:

Յիսուս Աստծոյ որդիներ է անուանում նրանց, ովքեր ընդունում են Իրեն եւ հաւատում Իր անուանը: Աստծոյ որդի լինել նախ նշանակում է մեր մէջ վերականգնուած տեսնել աստուածային պատկերն ու նմանութիւնը, որ աղարտուել էր դրախտում: Մկրտութեամբ որդեգրուածներս արդեն նմանութեան կենդանի օրինակ ունենք՝ Միածին Որդին, Որի անունով է մեր հոգեւոր զաւակութիւնը Հօրը: *«Երբ ժամանակը իր լրումին հասաւ, Աստուած ուղարկեց իր Որդուն, որը ծնուեց կնոջից եւ մտաւ օրէնքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրէնքի տակ էին, որպէսզի մենք որդեգրութիւն ընդունենք» (Գաղ. 4:4):* Աստծոյ Որդին մարդկանց որդիների պէս եղաւ, մտաւ ոչ միայն քաղցի, ծարաւի, հոգնութեան, հոգեւոր եւ ֆիզիկական ցաւ զգալու օրէնքի տակ, այլեւ պատժի, այլն էլ խաչի վրայ մահապատժի օրէնքի տակ, որպէսզի մարդկանց որդիները խաչի փրկագործութեամբ եւ Քրիստոսի անուան հաւատով որդեգրուեն Հայր Աստծուն: Մենք , իբրեւ արարածներ, Աստծուն արդեն ծառայաբար չենք մոտենում միայն, այլ որդիաբար: Քրիստոսի մէջ եւ միջոցով գործող Հոգին կարող է արդեն ամէն քրիստոնեայի միջոցով գործել՝ բժշկել, մխիթարել, զօրացնել… : *«Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած մեր սրտերի մէջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր: Ուստի, ծառայ չես, այլ՝ որդի, եւ եթէ որդի ես, ապա եւ՝ ժառանգ Աստծու» (Գաղ. 4:5-8)*:

Որդիութեան ամէնից կարեւոր երկու պարագաներն են Հօր խնամքը եւ ժառանգութեան բաժինը: Մեր մկրտութիւնը աշխարհի իշխանից եւ նրա տուած բաժնից հրաժարումն է, ինչպէս Քրիստոս անապատում հրաժարուեց աշխարհի թագաւորութիւններից: Մեր երկնաքաղաքացիութեամբ մենք բաժին ենք ունենում ե՛ւ երկնքի ժառանգութեան, ե՛ւ երկրի ժառանգութեան մէջ.*«Երանի հեզերին, քանի որ նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5:5):* Մեր Սուրբ Հայրերը սա մեկնում էին իբրեւ անմահութեան ժառանգում:

Անմահ է Աստուած, եւ անմահ են Իր զաւակները, քանի որ *«Նրանք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից եւ ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին» (Յովհ. 1:13):* Քրիստոս մեռեալ կոչեց ողջերի, որոնք պէտք է թաղէին իրենց մեռելներին եւ ողջ կոչեց վաղուց ննջածների: Աստծոյ հայեացքում ողջն ու մեռածը տարբեր են մեր պատկերացրածից: Դրա համար բոլոր դարերի քրիստոնեաները չեն վախենում մահից, աւելին՝ ընդառաջ էին գնում Քրիստոսի անուան համար նահատակութեան, քանի որ գիտէին եւ հաւատում էին, որ ոչ թէ ապրելուց դադարեցին, այլ *"մահից դէպի կեանք անցան»* (Հմմտ. Յովհ. 5:24):

Ամէն տարի հայութեան բոլոր մասերը՝ Հայրենիքում, թէ սփիւռքում, նահատակների առաջ խոնարհումով նաեւ պայքարում են յիշողութեան եւ արդարացի հատուցման համար: Բայց յիշենք, որ Իրեն որդիացածների վրէժը նաեւ եւ առաւել Հօրն է, եւ մեր վրեժը վստահենք ոչինչ չը մոռացող Արդարն Աստծուն, որ ***"Իրենց անձերը դրեցին հայրենիքի եւ բնիկ օրէնքների, կարգերի, աւանդութիւնների համար, հաւատի աղամանդեայ միամտութիւնը չը փոխանակեցին այս անցաւոր կեանքի փափուկ վայելումների հետ:***

Յորենի օրէնքով բարի հողի մէջ ընկնելով՝ աճեցին տարով մէկի դիմաց հարիւրապատիկ:

Սո՛ւրբ եւ ճշմարի՛տ Տէր, մինչեւ ե՞րբ դատը չես տեսնում, եւ մեր դատաստանի իրաւունքը չես փնտրում…” (Շարական Սրբոց Նահատակացն)

Շատերի համար հոգեւոր այս ընկալումները զուցէ անիրական թուան, բայց Սուրբ Գիրքն անգամ այդպիսիններին ուղղուած խօսքեր ունի՝ մխիթարելու, յուսադրելու, քաջալերելու եւ հաւատք զօրացնելու. *«Բայց արդարների հոգիներն Աստծու ձեռքին են, եւ մահը չի մօտենալու նրանց: Անզգամների աչքին թուաց, թէ նրանք մեռան, եւ նրանց երքն այս աշխարհից համարուեց տանջանք, իսկ նրանց հեռանալը մեզնից՝ կործանում, բայց նրանք գտնւում են խաղաղութեան մէջ: Ու թէպէտեւ մարդկանց թւում է, թէ նրանք տանջուեցին, բայց նրանք անմահութեան հաստատ յոյս ունեն”* (Իմաստ. 3:1-4):

Յարուցեալ Փրկիչ Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան



4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Chiftjian and Keshishi families for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **LEVON CHIFTJIAN** and also for the souls of **HAROUTUNE** and **VARTANUSH KALAYDJIAN**, **ANTRANIK** and **YEGHSAPET CHIFTJIAN**, **VAGHARSHAK KESHISHI** and **MAYRAM SHABANI**, and **BEDROS** and **MARIE AVDJIAN**, and **ADRIAN** and **MARGARET VALERIE POZZI**, also for all the old and new deceased members of **CHIFTJIAN**, **KALAYDJIAN, KESHISHI**, **AVDJIAN** and **POZZI** Families.

By Melkonyan Family for the soul of their departed family and friends the late **AZAD MELKONYAN** (Ազատ Մելքոնյաններ), **ANITA, ARARAD** and **ALBERT HOVHANESSYAN** (Անետա, Արարատ և Ալբերտ Հովսեփյաններ), **SIMON** and **PAVAGAN KRIKORYAN** (Սիմոն և Բավական Գրիգորյաններ), **LEVON** and **GAYANE MAILLYAN** (Լևոն և Գայանե Մաիլյաններ), **HOVHANNES** and **ASDGHIG HOVSEPYAN** (Հովհաննես և Աստղիկ Հովսեփյաններ), **BELLA**, **RAFFI**, **NINA** and **LIYOVA KRIKORYAN** (Բելա, Ռաֆիկ, Նինա և Լյովա Գրիգորյաններ), **KEGHAM GHAZARYAN** (Գեղամ Ղազարյան), **ROSA** and **KOHAR AMIRYAN** (Ռոզա ,Գոհար և Ամիրյաններ), **ZOYA NARKIZYAN** (Զոյա և Նարգիզյաններ) memorial service of their passing, also for all the old and new deceased members of the **MELKONYAN**, **HOVHANESSYAN, KRIKORYAN, GHAZARYAN, AMIRYAN** and **NARKIZYAN** Families.

By Mr & Mrs Yervant Tidanian and family for their parents who were also a loving Grandparents the late **KRIKOR** & **ARPINE TIDANIAN**, also **VARTKES** & **MARO KESHISHIAN** and **PERLANTI** & **GARABED KESHISHIAN**, also for all the old and new deceased members of **TIDANIAN** and **KESHISHIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk